

ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆ

(տար. տես էջ 302)

ԱԿՆ կամ ԷԿԻՆ. ԳՊ. ԵՂԻՆ. Թ. ՀԱՅԿԱ.

Գիշեցկազդիր և աւելի իւր անցեալովն քան ներկայ վիճակով հոչակաւոր բաղար փոքր Հայոց, որ նեղ ձորակի մը մէջ, Եփրատայ աջ կողմէն ամփիթէատրոնաձև աստիճանաբար կը բարձրանայ բարձրակատար լերտն մը կողը (թ. 4¹), գրեթէ մէկ Հզրմ. բարձրութեամբ և երեք հզրմ. երկայնութեամբ: Ճարտար զրիշ ազգային այցելու մը իր խօսքերն Ակնայ ուղղելով Հետևեալ նկարագիրն կ'ընէ. «Միթէ կ'արժե՞ս զու, մեծահամբաւ բաղարդ, այսքան նեղութիւններ կրել տալ բեղ այցելու եկողին: Արդարեւ երեւ ճնշուած՝ բարերէ, խորերէ, վախերէ, բրսնամթամթախ և արինաշաղախ եղելներէ, յանկարծ կը տեսնես Ակն՝ ձորակի գագաթէն, այնքան շըեց շէնքերով և գեղեցկագարդ ծառատուն կերով, կարծես արբայութին մի է այն. իշնալ պէտք է մինչ կիրճն խոր յատակը, և երկրպագելով Եփրատի թագաւորութեան պատուանդանին, ապա անցնիլ կամուրջով մը, յայնժամ կը տեսնես թէ այդ արբայութեան հանգիստ կարծած բաղարդ՝ բանի դժուարին և անելանիլ առապար մ'է, ինչպէս մարդ պատէն կամ պարսպէն ի վեր ընթանայ. բարերու մէջ ենք, բար կը կոփենք, բարերն ի վեր կ'ինքնեց, եթէ միիթարութին մը կայ՝ քարաշար սանդակներն են, խորոշցող առատ ջրեր, և ծառոց ու բուսոց կանանչ սաղարթներ, որ տարածուելով փողոցներու պատերէն զուրս՝ գեղեցկութիւն մը սփռած են»:


Կառուցուած է Ակն միջավայրի մը վրայ, իւր հարաւային արևելեան կողմը կ'ինչնայ Խարբերդ 95 հզրմ. Հետաւորութեամբ, հիւսիսային արևելեան կողմը Երզնկա 400 հզրմ. հեռու, 35 հզրմ. զէպ ի հարաւ Աւրարկեր, և 97 հզրմ. նոյնայս զէպ ի հարաւ

դու Մալաթիա. իսկ Զմշկածակ հեռու է 14 ժամ և Տիգրիկ 42. իրեն մօտ են նաև Քեմափ (հն. Անի ամրոց) և Կիւմիշ-Մատէն (հն. կասպան) աւաններու: Միայն հայկական տոկունութիւնն և նիգն կարող էին այսպիսի ապառաժուտ բարային մեծ անապատի մը մէջ, Եփրատայ մեծափառ խոփոշնաբէն և ակնապարար խաղացըբէն և այլ բաղամզիմի առաւելութիւններէն ձգուած՝ հիմնել բաղարդ: Մարդկային ձեռքն աղակցելով բնութեան՝ այնքան բազմազան և զեղազուար գարձաւցած է Ակն, որոյ նմանը գծուար է գտնել մեր Բնաշխարհի ուրիշ կողմերը: Աւելի Վասպուրականի քան Անոյ գաղթականը են Ակնեցիբ, բայց կարելի է հաւանական համարել նաև այն կարծիք, թէ Վասպուրականի գաղթականաց վրայ, ի վերջոյ աւելցած ըլլայ մաս մը ևս ողբացեալ Անոյ բնակչաց:

Քաղաքին Ակն անուան ստուգարանութիւնն հետաքրագական է, և հետեւալ կերպով կ'աւանդուի: Անոյ կործանմանն վերջ, նորա Հայ բնակչաց հարուա և կարեոր մէկ մասը, նոր հայրենեաց մը ի խսդիր ելած, կու գայ կը համին Ակնայ ձորը, Անի ամրոցի նեղ կապանն անցնելով, և պատահեով այս ձորի մէջ լենին հոսող առատ ջրոյ մը, կը ցանկայ գտնել նորա Ակն, և երբ կը յաջողի, կը հիմնէ անդ բաղարդն, որ ջրոյն ական անուամբ կը կոչուի Ակն: Անատապուղու ջրոյ այս առուակն, որ վերին թաղի հիւսիսային կողմը, մեծ մզկիթի վերեւը ապառաժի մը ներքեւէն կը հոսի իրը և կամ 4¹/₂ կանգուն տրամագծով, բնութեան ամենազեղեցիկ տեսարանաց մին կ'ընծայէ: Բնիսած տեղն մեծամեծ ապառաժներով շըրջապատուած աւազան մը կը կազմէ, ուսկից առուակներու բաժնուելով, մէկ մասն ջրազացներ զարձնելու, պարտէզներ շըրելու կը ծառայէ, և մէկ մասն ալ խողովակներով կը բաժնուի, փողոցներու մէջ զանուած հասարակաց և կամ տանց մէջ մասնաւորաց աղբիւրներու: Այս ջուրն գարնան կ'առատանայ, և մէկ հզրմ. բարձրութենին մինչն Եփրատ գետը կը գահալիմէ ահեղագոչ որոտմամբ, խաղուցիչ շառաչմամբ, և սպիր. A.R.A.R.®

տակափրփուր: Այս ամենառատ, վճիռ և զով ջրէն զատ, կան նաև ուրիշ ջրեր, ինչպէս կարե-աղրիշրի, Ակե-ծովի կամ Ակե-դովի, Խնձակի, Բերդի-աղրիշրի, Խնձառորի, և այլն: Քաղաքին ձորերն են Մեծ ձոր, Չըրիկ կամ Ճարիկ, Պատուկ կամ Տափակ և Առեգի ձոր՝ որոյ ջուրն հեռուներէն կու գայ, Չոխ-մարի (Ճոխ-մայր) և Գոլանի ջուրց հետ միանալով ջրաղացներ կը զարձնէ, պարտէջներ կը ջըւ և կը թափի յԵփրատ: Ակնայ լեռանցամէջ և միանգամայն բարձր

թենէն մինչև փողցներու յետին անպիտան քարն, իիձն ու աւազն մասնաւոր հոգածութեամբ և յատուկ աշխատութեամբ և ծախ-քովի կարգաւորուած և զետեղուած են: Քարալերան մը առապարի զարիվայր կողին վրայ, արուեստական թումբեր կանգնելով հարմ կամ նուազ հակեալ մակերևոյթ սաեղծել՝ փոխաղրելով անդ ի հեռուստ հող և աւաղ պարտէզի կամ որթատոնի վերածելու համար զայն, ամէն երկրի բնակչաց համար սովորական գործ մը չէ, գէթ Ասիոյ



Ակն քաղաքի տեսարամը:

զիրքն, բնականաբար իրեն կը պարզեւեն առողջարար օդ, ամրան զով և ափորմելի և ձմեռն նուազ ցուրտ, զինքը շրջապատղ բարձր լեռանց չնորհիւ ազատ և նաև աօթակին իորշակէ:

Ակնեցիք ամենայն միջոց ի գործ զնելով կրցան են նուանել բնութեան անհամբոյը և խոժու կորդաստանները, զի սկսած տանց արեգակնակներէն, պատշաճաներէն և կահարասսեաց ամենանուրը ճարտարագործու-

այս կողմերու մէջ, զի կը պահանջէ նիւթական կամ անտեսական կարողութեան լծորդուած բարեկեցութեան ճաշակ և զգացում, յորում Ակնեցւց աստիճանը զերացնացապէս կը փայլի: Մարդ պատկանանց կը զգայ բաղաքիս փողցներէն անցած ատեն, երբ ի յուշ ածէ, թէ օսմ. վիհապետաց և նախարարաց պետական ծառայութեանց մէջ երբեմն այնքան փայլող հոչակաւոր ամիրայից հայրենեաց մէջ զանուի, ուր կը նշմարուին

նոցա փառաց և մեծութեան կանգուն և խո-
նարհեալ բազմագունակ նշխարներ և յիշա-
տակարաններ:

Մէկն Ակնայ նկարչական գեղեցիկ զրից
վրայ գաղափար մ' առնելու համար, պէտք
է բարձրագոյն տան մը վրայ կանգնած զիտէ
այն երևայթը խաճանալ աներէ, եկեղեցինե-
րէ, մզկիթներէ, ծառերէ, պարտէններէ, որ-
թատունկերէ, ջաղացըներէ, այլ և այլ ա-
րուեստաւորաց զործաններէ՝ և այն, որը
անկանոն բայց զուգակից ներդաշնակու-
թեամբ իրարու լծրողուած, հրապորիչ տե-
սարան մը, կամ թէ ըսեմ գեղափայլ և գե-
ղազուարթ ովասիս մը կը ներկայացնեն զի-
տողի աշաց:

Ոչ միայն պատուական առաս ջըրը,
այլ և անշուշտ տեղույս բնական ամսուր զիրքն
դիտելով նախին հիմնարկող Ակնայ, որ-
որդիներէ հալածուած թոշոց նման՝ ապաս-
տանած են այս անմերձնալիք և անափիկ
քարերուն: Քաղացս իր արևելեան և արև-
մրտեան ամենանեղ և զժուարակուիս կապան-
ներն բանելով կարող է արգելու ամսն յար-
ձակմնանց, իսկ հիւսիսէն և հարաւէն զիրքէն
բացարձակ անհնարին է մտնել անդ լիո-
ներու երեսէն: Նշանակութեան արժանի է
Ակնայ ձորոյն մէջ արձականգի սասակու-
թիւնն. փոքրիկ ատրճանակի մը պայմումն
անգամ այնպիսի ահաւոր զոռում գուցում
կը պատճառէ, որոյ հաւասարը գուցէ հա-
րիւրաւոր թնդանօթներու միահաղոյն պայմ-
ունը չեն կարող տոաջ թերել լյանածաւայ
դաշտերու մէջ, Ահաւոր և սարսափելի է նաև
երկնից որոտման գոռումը, որ կը թուի աշ-
խարհի բոլոր լինակոյստերու մի և նոյն ժա-
մու մէջ վլուզման ահեղ ձայնը:

Քաղացիս և մօտակայ գիւղօրէից տնե-
րը մեծաւ մասամբ երկայարէ և եռայարէ
են, կան նաև բառայարէ պարանքի պէս
աներէ: Վերի յարկերը ընդհանրապէս փայ-
տաշէն են, իսկ ստորին յարկերը բարաշէն:
Վերին թաղի և թաշ-տիպիի տներն շի-
նուած են իրարու վրայ, և միոյն տանիցն կը
ծառայի իրրեն ճանապարհ կամ հրապարակ
միայն: Բաց ի վերին և թաշ-տիպիի թա-
զերէն, միւ բոլոր թաղերն ալ փոքր ի շատէ

զարդարուած են պարտէղներով, յորու կը
գտնուին թօւթ, սալոր, խաղող, ինձոր,
տանձ, ընկոյզ, և այլ տեսակ պտուղներ և
բանջարեղներ: Եփրաս զետը որ անցնելով
Երզնկայի մօտէն և կամախէն կու գայ կ'անց-
նի քաղացիս ճիշզ ստորոտէն, ունի իւր
բազմաթիւ օգուտներն: Հետը կը բերէ շինու-
թեանց և վառելու փայտեր, և կ'ընծայէ զա-
նազան տեսակ շիշէկ, մող, վազ, թեփիկ,
շաղփու, ցոկի, տափակ-բերան և այլ ա-
նոններով ձկներ: Քալակոյլ կամ տիկա-
լաստով ալ՝ ուղերութիւն և ապրանաց փո-
խազրութիւն կ'ընեն, հոսանքն ի վար միայն:
Ակնայ առջեր՝ զետոյս վրայ ձգուած կա-
մուրջն, որոյ երկու կողմի քարէ որմեր՝ և
մէջ տեղերն փայտաշէն են, Խճջէ թուին,
սուրբ Թակորայ բարեկենպանի շաբաթ օրը
այրելով, տեղացին վերստին շինած են զայն:

1880 տարւոյ վիճակազրութեան մը հա-
մեմատ, բաղացիս Հայոց թիւն է 5442,
խոկ Թրբաց 4286: Հայր ունին երկու ե-
կեղեցի Ս. Աստուածածին, Վերին թաղի
մէջ, որ 40 տարի առաջ ի հիմանէ վերըս-
տին կառուցաւ բարուկիր և սինազարդ, ո-
րուն վրայ զիրեթէ 5-6000 ոսկի ծախս եղած
է. Ս. Գեռորդ, Վարի Թաղի մէջ, 1874-76
տարիներու մէջ այս ալ վերստին կառու-
ցուած է գմբէթաւոր և աւելի ճարտար-
արուեստ: Վերեզմանատունը Ս. Աստու-
ածնայ եկեղեցւոյն վերի կողմէն սկսելով
մինչեւ երան ստորոտը և զեա ի հարաւ կը տա-
րածուի, պարիսպ չունի, և ամէն ընտանեաց
համար փոքր և ցած որմերով բահուած
զատ զատ մասեր կան: Ի հնումն կայ եղեր
աստ նաև Ս. Յովհաննու Սիկերեանի եկե-
ղեցի մը, որ Խճջէ թուին Եղիշական պահոց
մէջ այրերէ, ըստ յիշատակարանաց Յայս-
աւուրաց: Վարի Թաղին մէջ է Ներսիսեան
վարժարանը և Վերի Թաղի մէջ Նարեկեանը,
իսկ Արեգի Թաղի մէջ կայ Հայկազեան
ծաղկոց: աշակերտաց թիւն կը համի 400ի
և աշակերտուհեաց 140ի: Քաղացս ունե-
ցեր է նաև զանազան կըթական ընկերու-
թիւններ, ինչպէս «Ազգասիրական ընկ.»,
«Աւումանամբարական ընկ.», «Արամեան ընկ.»,
«Շւատական միութիւն», որոյ ումանք

ոշնչացան։ Թուրքերն ևս ունին իրենց գլուխոցները, և հինգ մզկիթ, յորոց մին, որ կը գտնուի Վերին թաղի հիւսիսյին հողմը, կ'ըսեն, թէ հին ժամանակ եկեղեցի է եղեր։

Ընդհանրապէս Ակնեցիք, զիւղաբնակներն անգամ, բաղաբացոյ կենաց կը վարեն, երկրագործութիւնը դրեմէ բոլորովին մէջինէն վերցած է, արդէն մշակութեան յարմար հոգեր ալ կը պահին։ Այս պատճառաւ թէ զիւղացիք և թէ քաղաքացիք կը զիմնեն յօտարութիւն, անզ վաստակելու և ի հայրենին վայեկելու։ Առած մը կ'ըսէ թէ՝ «Ակնցու երկու ոտքէն կաղն մինչև Հնդկաստան հասեր է, մէկ ոտքէն՝ մինչև Չինումալին»։ Խնչպէս ծիծնանակը, որ իւր բոյնը կը շնէ քարի մը կողը, և ինըն արագ արագ կը պահայ յայս և յայն կոյս որդ և կուտ կը կրէ իւր ձագուց, նոյնպէս և Ակնցին շարունակ կ'եթեայ կու գայ, կը բերէ, կը սպառէ, և նորէն կը վերապանայ, կան նաև ոչ սաշակար, զարիին, պղնձափործ և կայսեկող, սուկերիչ, ներկարար, խաղախորդ և սեղանաւոր, ընդհանրապէս Հայ են։ Վաճառականաց, մրգավաճառաց, զեղագործաց, և ժամանակործաց մեծագոյն մասն ալ Հայ են։ Իսկ մանավաճառաց, որմնալրաց, հիւսանց կևը Հայ են և կևը Թուրք։ Հացագործաց ալ մէկ մասը Հայ, և մաս մ'ալ Թուրք և Կիւմիշ-Խանէցի պանզովա Յոյներ։

Ակնայ արհեստաւորք՝ սոտայնանկ, կօշկակար, զարիին, պղնձափործ և կայսեկող, սուկերիչ, ներկարար, խաղախորդ և սեղանաւոր, ընդհանրապէս Հայ են։ Վաճառականաց, մրգավաճառաց, զեղագործաց, և ժամանակործաց մեծագոյն մասն ալ Հայ են։ Իսկ մանավաճառաց, որմնալրաց, հիւսանց կևը Հայ են և կևը Թուրք։ Հացագործաց ալ մէկ մասը Հայ, և մաս մ'ալ Թուրք և Կիւմիշ-Խանէցի պանզովա Յոյներ։

Կամարկատ և Ապաշչի թէսէկս ըստ պաշտօնական վիճակագրութեանց առանձին գիշեր են, սակայն իրենց մերձաւորութեամբն կրնան համարուիլ մէկ մէկ թաղ կամ արուարձան, յորս կը տիրէ մի և նոյն քա-

զարակրթութիւնն, ընտիր ճաշակին, և այլ ամենայն ինչ որ յատովէ է Ակնայ։

Քաղաքին իւր շրջակայ Հայոց զիւղերով, բաւական չէին անդադար ի հնուց ի վեր կրած հարստահարութիւնն, վերջին ահաւուր բաղդատած մը ունեցաւ 1896 տարւոյ սեպտեմբերի մէջ։ Հայոց Վերին թաղի տներու մեծագոյն մասն հրոյ ճարակի եղան։ Ընդհանուր անձանց կորուստն ըստ լրազրաց համարուեցաւ 2000 հոգի։ Այնայն անհասելի խոդութիւնն ի գործ գրուեցան, Հայոց կրիկն եկեղեցիք այրուեցան և երիցոնց սպանուեցան։ Նոյն թշուառութիւնն պիտի զար բաղաքիս վրայ 1895ին, եթէ Հայը 1500 լիրա փրկանց շտային։ Այս գևաքնն վերջ, հարուստ Ակնի ողջ մասցած ժողովորդն բոլորովին յնոտին աստիճանի աղքատացաւ և մինչեւ անդամ չոր հացի կարօտ մնաց։

Ակնայ առաջնորդ եղած է ժամանակաւ և նորու նկարազիրն իր Թորոս Աղոր 243-48 իջից մէջ հրատարակած հանգ. Գարեգին եղ. Սրուանձտեանց։ Պ. Յ. Կ. Ճանիկին բնիի Ակնիցի, 1895ին Ցիկիսու Հայոց Հրատարակական Բնկերութեան միջոցով հրատարակեց Հնոքրիշնը Ակնայ վիճնազրով բաւական ստուար հատոր մը, յորում մանրամասն կը խօսի բաղաքիս և շրջակայից հին և նոր պատմութեան և տեղազրութեան վրայ։ Տեղեկութիւնն կու տայ նաև ազգային զանազան սովորութեանց, բարուց, գաւառարքրափի և աեղական երգերով վրայ։ Պ. Մարկոս Նաթանեան, 1885 տարւոյ Մասիսի 870-72 և 947-19 իջից մէջ, հրատարակեց բաղաքիս ճոխ նկարազիրը, զոր մասամբ մը համառակիով հրատարակեց նաև Պ. Յ. Գուլամիրիսանց Արարի թ զրքի 33-37 իջից մէջ։ Ներկայ նկարագիրն բաղուածք մ'է վերոյիշեալներու մնաւանդ Նաթանեանի գրութեան։

Համանուն Ակն գաւառակի կամ վիճակի սահմանցն են Հս. Էն Սիրաստիոյ և կարնոյ կուսակալութիւնները, Ար. Էն Տէրսիմի գաւառը, Հը. Էն Արտակերի վիճակը և Ամ. Էն Սիրաստիոյ կուսակալութիւնը։ Նորագոյն վիճակագրութիւն մը չունենալով, տուանձին

տախտակի մը մէջ կը զնեմք 1880ին կա-
տարուած մարդահամար մը, բազմաթիւ
գիլղեր, որոց այժմեան անուանակոչութիւնը
իսկ կը յայտնին թէ ժամանակաւ Հայոց
եղած են, այժմ թրբարնակ են. թշնամոյ
սուրն և հուր և բազմադիմի խեցութիւնը
ստիպեր են նոցա Հայ բնակչաց կրօնափոխ
և միանգամայն Եղուափոխ լինելու. Վիճա-
կիս մէջ կան նաև քանի մը զիլղեր, որոց
բնակիչը Հայհոռամբ կը կոչուին. Ասոնց լե-
զուաւ և սովորութեամբ Հայ են, թէպէտ և
տոփին անդին ճանապարհորդող մարդի զի-
տեն նաև յունարէն: Կարեր կը Համարիմ
ասս ի մէջ բերել Հ. ինձինեանի Հայհո-
ռամնց վրայ զրածն. «Յառաջազոյն անխոտիք
առնութին և տային Հայոց զբաներս ի կու-
թին, այլ այժմ՝ յաւուրս սովլման Համիտի
նոր բարողիչը Յունաց առաքեալց առ նոսա
ընդ նորդիք պատուիրեցին շանուու և շտալ
զբաներս իւրեանց ի կութին Հայոց, Գոտա-
նին ի Հայհոռամնց ի կ. Պոլիս քաղաքի
տոննը երեկոյից եկեալց ի գաւառէն Ակնայ:
Ազգ սոցա յայտնի իմ երկի սերեալ յազ-
գէս Հայոց, և կրօնի զարձեալ ապս առ
Յոյնս, և ոչ սերեալ ի Յունաց, և զիեզան
փոխեալ ի Հայհականն. այսպէս զնէ և Միխ-
թար Ազարանցին ի զիրս իւր յամի տեառն
1410, զոր ունիմբ առ մեզ և կոչէ զնոսա
Ծաթ Հայեր: «Եւ ոմանք կոչին Ծաթ Հայեր,
որ լեզուով զրով և ազգաւ են Հայեր. բայց
զաւանութեամբ և ամենայն օրինօք են Յոյնն,
և ամենայն կերպիւ հնազանդ նոցա,,՝ Վասն
այնորիկ կոչէ զնոսա Ծայթս, զի յայնմ ժա-
մանակի զնէ զնոսա միաբանս ընդ ծայթ
Յունաց ոմանց՝ որը զիետ երթային աղան-
դոյ Անդրէասայ ուրումն եպիսկոպոսի կե-
սարու: Հաստատեն զայս նախ առաջին
պատմազիրը մեր յառաջ բան զՄիխթար
Ազարանցին, որը զիրն թէ ի մէջն անդ ժՈ.
զարուն ի ժամանակս կոստանդն կայսեր Տու-
կիծ կամ Տուքաս կոչեցելոյ, նոյնպէս յելս
անդ ժի՞ զարու ի ժամանակս Բ Սահակայ
կայսեր, սաստիկ իմ բանազատութիւն եղե
Հայոց բնակելոց ի կողմանս Սերբաստիոյ կամ
Սերբաստիոյ առ ի զարձուցանել զՀայս ոչ միայն
հաւատով, այլ և ծիսիւ ի կրօնս Յունացու:

Վիճակիս մէջ վաճառականութիւնն այն-
չափ զարգացած չէ. ցորեն, ոչխար, պանիր,
իւղ և այն թշլակայ գաւառներէն կը բերեն.
իսկ զգեստեղէններ, շաքար, սուրճ, օճառ,
թղթեղէնը, զբանը, երկաթ և այլ մեսու-
ղեղնց մեծաւ մասամբ կ. Պօլսէն և Հայէ-
պէն: 1874էն սկսեալ մուտ զործած է այս
կողմերը Հայոց մէջ նաև բողոքականութիւնն,
որոց թիւն տակաւին 100ը անցած չէ:
Վերջին ախուր դիպաց ժամանակ Ակնայ
Հայոց զիւղերն ալ զերծ շմացին, 1000էն
աւելի տներ կողոպտուեցան և շատերն ալ
այրուեցան: — Ս. Երևաւան կամ Ս. Փիլիչ
Վանլիք. Ակնէն Յ ժամ հեռու զեպ ի հիւսիս
Չօփիկը Թրբաց զիւղի վերև բարձրաւան-
դիկի մը վրայ կառուցուած է մենաստանս,
որոյ աջ կողմը կը զանուի Գոհանամ լեռը.
ունի առողջաբար օգ և պատուական ջոր:
Աւանդութիւնը կ'ըսէ, թէ սուրբ Եւստաբիոսի
կամ Ազգակիտոսի զօրավարին յիշատակին
շինուած է վանքս թ զարու մէջ, ուր Ս.
Խաչն երկեցեր է սրբոյն եղջերուի մը զիխուն
վրայ: Աստ այժմ կայ եկեղեցի մը, բանի
մը սենեակներ, փուռ, ախոռ և այլն: Քիչ
մը վերև կը զանուի Երևան մատուն, որոյ
շնոր եկեղեցին աւելի հին է: Ակնայ առաջ-
նորդն է միանգամայն վանացս վանահայր,
բայց բաց ի մի բանի մշակներէ և սպա-
սաւորներէ ուրիշ վանական կամ միաբան
չի զանուիր: Վանցս ունի երկու ձեռագիր
աւետարան, և եկեղեցական զգեստներ և ա-
նօիթներ, որոց մեծագոյն մասը ապահովու-
թեան համար փոխազրած են քաղաքը: —
Արակայի կամ Գրիգոր Նարեկացւոյ Վանք-
տես Արակա: Վիճակիս միւս ուխտատեղի-
ներն են Ս. Կողմու և Դամիշանոս Կարուշ-
լայի մէջ. Անմահուրիւն, գետեղերը Մեծ
ձորի մօտ. Ս. Յակոր, Թաշշ-տիպիկի վերեն
լիրան ստորոտը մեծ վկմ մի է. Ս. Թա-
շալուս, Ակնայ գերեզմանատան մէջ, ուր եր-
բեմն ժամերգութիւն ալ կը կատարուի. Ս.
Լուսաւորիչ, Արեգի թաղի վերև, պարսպա-
պատ, խորան մ'ունի, զիւտ նշխարաց տօ-
նին պատարագ կը մատուցուի. Ս. Սարգիս,
Վանիք զիւղի Հայհոռամնց եկեղեցւոյն կից
մատուռ մ'է. Լուսաղիշտ, քաղաքին զիմաց

Յնծալենց պարտէզներուն վերը : Բաց ի այս ուխտատղիներէն, ովկտի կ'երթան նաև Երբասաղէմ, աշնան ճամբայ կ'ենենք, Ճեռն հոն կ'անցընեն և Զատկէն վերջ կը վերադանան : Ոմանք ալ՝ մասնաւորաբար արք, կ'երթան Մշց սուրբ Կարապետին : — Նոր Հայ. 304—309 : Վ. Քիմէ, թ 362—366 :

Շարայտելի

Հ. ՍՈՒՐԵԱՍ ԷՓՐԻԿԱՆ

ՀՆԱԽՕՍԱԿԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆ ԱԲ ՊԱՏԿԵՐԻՆ

(շար. տես էջ 264)

Ա ԻԱՐՏԵԼՈՎ նախագրելոց մէջ Ա. և Բ գիտուութեանց կրկնութինը, այժմ կը մնայ ինձ խօսել մեացելոց վերայ, և նախ երրորդին, թէ քրիստոնէութեան սկիզբն, այն է Ա. և Բ զարոց մէջ, միայն կ'իշրակէ պատարագելը բացարձակ կարծիք չէ :

Մեծ. Նախարեթեան կը պնդէ վերտանին, կը կրկնէ և կ'երեքնէն, թէ « Առաքելոց և առաքեական երկու դարերուն բացարձակ նուիրական օրն էր կ'իշրակէն . ինպիր շվերց-ներ . այն օր միայն կը խմբուէին ի ժողով, այն է հացի բեկումն » : Իմ այս խօսքը՝ թէ « բացարձակ կարծիք չէ », անշուշա բացէ ի բաց շմերէ միայն կ'իրակէ լինելը, և ոչ հաստատագէն կը պնդէ այլ օր եւս լինելը . այլ կը նշանակէ՝ թէ ստուգելի է : Այսոր

գէմ նա կը յարուցանէ երկար բանից և ծանօթ վկայութեանց մի փոթորիկ, որ երբ պարզի՝ մեր գարձեալ կը յանդիմք այն հետեւութեան՝ թէ « բացարձակ կարծիք չէ միայն կ'իրակէն » : Այն վկայութինք, զորս կը յիշէ ի ո. զրոց, Յուստինոսէ և յայլոց, և քան զորս աւելին կարող էր մէջ բերել, կը հաւասարն կ'իշրակէի ժողովումն և հացի բեկումն, որոց մասին տարակայս կամ ինդիք ոչ որ կը հանէ : Առաքելոց և նոցա ժամանակցաց կ'իրակէի յիշատակութինը և այլ աւուրց բացարձակ լուութինը՝ միանդամայն բաւական կը լինի մեզ կարծելու, թէ բրիստունութեան բուն սկիզբը միայն կ'իրակէն էր ժողովի և պատարագի առհմանաւծ : Բայց այդ վկայութինք, կը կրկնեմ, թ զարուն համար բացարձակ զօրութին չունին : Տերառութեանու ստատունի կամ պահոց երկու աւուրց համար բասծն՝ « ընկալեալ ի մարմոյ տեանն » , այնպէս հեշտ չէ նախարեթոց պատարագն իմանալ, որ է հաղորդիկ՝ կ'իրակէն պահուած նշխարէն *** : Զի՞ նախ՝ այս պատարագին ծագումն զժուարաւ կրնայ յի՛ զար հասնի, նկատելով այնոր հեղինակները՝ որոց կ'ընծայուի *** : Երկրորդ՝ որ հնագէտց յունաց միայն կոտ տան այնոր գործածութինն հին ժամանակ *** :

Այսէին կայ : Քրիստոնէութեան առաջին երկու զարուց մէջ ժողով և բեկումն հացի այնպէս կապուած են իրարու հետ, որ մին առանց միւսոյն չկարէ լինել, մին զմիւն կը մեկնէ : Առաքելոց Գործոց մէջ այդ երկուոր միշտ զոյց կը զանեմք . « Եին հանապաղործեալիք վարդապետութեան առաքելոցն և հաղորդութեան և բեկանելոյ հացին և աղօթից » (թ. 42) : « Եւ յաւուրն շարաթաւց մինչզեր ժողովեալ էաց բեկանել գհացն » (ի, 7) . և այլն : Ա. իգնատիոս առ Եփե-

* Ցաշակս աշօթից, ԺԴ:

** Այժմ յոյնք քառասանորդաց մէջ միայն ունին զայդ (բաց ի շաբաթէ և կ'իրակէէ) : Քառասանորդաց մէջ դործածութինը կը յիշուի և ի ՖԲ կանոնի Տրուղեան ժողովոյն (յամին 692) : Իսկ ըստ Զատկական ժամանակագրոց

(յամին 645) կը գործածուէր նա և յայլ առուրս ինչ արտաքոյ պահոց (Հա. Ա. , յէջ 705-6) :

*** Պարգմայցք, հ. 3. Գալթընէնի, յէջ 349 :

**** Մարտինի, Բառարան քըլիստ, հնութ. յէջ 466 :